

ԱՊԱԳԻՆՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻՒ 2411 ԵՐԿՈՒԾԱԲԹԻ 20 ՆՈՅԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2411 • 20 NOVEMBRE 2023 • MONDAY, 20 NOVEMBER 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ՊԱՔՈՒ ԺՈՋԵՑ ՊՈՐԵԼԻ ԽՕՍՔԵՐԸ ԿԸ ՈՐԱԿԵ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ՈՒՐ ԿԸ ՎՏԱՆԳԵ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ըստ Ատրպեյճանի պետական ԱՓԱ լրատու գործակալության՝ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարության հրապարակած է հաղորդագրություն ի պատասխան Երուսաղեմի Միության արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն յանձնակատար Ժոզեֆ Պորելի յայտարարություններուն, ուր Պորելի խօսքերը սեպտեմբերին մեղադրանքներ որ կը սպառնան Ատրպեյճանի գերիշխանության և տարածքային ամբողջականության:



«13 Նոյեմբեր 2023-ին Երուսաղեմի Միության արտաքին յարաբերություններու և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Ժոզեֆ Պորելի՝ Պրիքսելի մէջ Արտաքին յարաբերություններու խորհուրդի նիստէն ետք տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին Ատրպեյճանին ուղղուած մեղադրանքները միտումնաւոր կը խեղաթիւրեն իրողութիւնները:

«Հայաստանին միջազգային օրէնքի արժեքափերուն և սկզբունքներուն համապատասխան գործելու խրախուսման հարցին մէջ որեւէ քայլ չձեռնարկած Երուսաղեմի Միության ներկայացուցիչի մեղադրանքները վտանգ կը ներկայացնեն Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան և գերիշխանութեան համար», նշուած է հաղորդագրութեան մէջ:

ԼՈՒԻՍ ՄՈՐԵՆՕ. «ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԲԱՆՏԵՐՈՒՆ ՄԵՋ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅԵՐԸ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՉՈՅԵՐ ԵՆ»

Ալիւր որեւէ բան ընելէ առաջ նախ կը փորձէ հասկնալ, թէ ինչ պիտի ըլլայ արձագանգը: Alpha News-ի հետ զրոյցի ընթացքին նման կարծիք յայտնած է Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ՝ Լուիս Մորենո Օգամպոն:



«Ալիւր նախ կը փորձէ հասկնալ, թէ ինչպէս պիտի ըլլայ արձագանգը: Տեսէք, թէ ինչ եղաւ Բերձորի միջանցքին վրայ: Սկիզբը ան կ'ուղարկէ, ինչպէս ինք կ'անուանէ, բնապահպան-ցուցարարներ, որ Ատրպեյճանի կառավարութեան անդամներ չեն, յետոյ անվտանգութեան ուժեր կը տեղակայէ այնտեղ, մասնակի շրջափակելով Բերձորի միջանցքը, այնուհետեւ կ'իրականացնէ շրջափակումը: Ան տեսաւ, որ ոչինչ պատահեցաւ: Այո, որոշ երկիրներու ղեկավարներ զանգեցին իրեն, բայց ոչինչ պատահեցաւ: Ան յիմար չէ, կը ստուգէ անոնց արձագանգը», - ըսած է Օգամպոն:

Անոր կարծիքով՝ ԱՄՆ-ն, Իսրայէլը, ԵՄ-ն մեղաւոր են այն ամէն ինչի համար, որ տեղի ունեցաւ Արցախի մէջ, քանի որ Ատրպեյճանին թոյլ տուին ընել ասիկա:

«Միայն միւս երկիրներունն է՝ ինչպէս ԱՄՆ, Իսրայէլ, ԵՄ, որ թոյլ կու տան անոր ընել ասիկա: Այդ պատճառով ինծի համար կարեւոր է հասկնալ ինչ պատահած է, երբ ցեղական գտումը կ'անուանենք Ցեղասպանութիւն: Անիկա իր

Շար. - էջ 9

ԱՄՆ ԾԵՐԱԿՈՅՏԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՈԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ ԱՐԳԻՆՈՂ ԲԱՆԱԶԵՐ ԸՆԴՈՒՆԱԾ Է

ԱՄՆ Ծերակոյտը ընդունած է բանաձեւ, որով կ'արգիլուի ԱՄՆ-ուն ռազմական օգնութիւն տրամադրել Ատրպեյճանին: Օրինագիծը նախագահին կ'արգիլէ յառաջիկայ երկու տարին հրաժարելու Ազատութեան աջակցութեան գործի 907-րդ յօդուածէն, որ ԱՄՆ կառավարութեան արգիլած է Ատրպեյճանի կառավարութեան ուղիղ օժանդակութիւն ցուցաբերել:

Ամերիկացի ծերակուտական Կարի Փիթըրսը օրինագիծը ներկայացուցած էր 2023 թուականի Սեպտեմբեր 29-ին՝ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի հայերուն դէմ Ատրպեյճանի յարձակումներուն:

«Ատրպեյճանի կառավարութիւնը հասկցուցած է, որ կրնայ եւ պիտի օգտագործէ իր ռազմական միջոցները Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին դէմ բռնի յարձակումներ իրականացնելու համար», - ըսած էր ծերակուտական Փիթըրսը:

«Միացեալ Նահանգները չի կրնար մեղսակից ըլլալ հայ ժողովուրդի նկատմամբ ատրպեյճանական բռնութիւններուն. մենք պետք է ընդունինք այս օրէնսդրութիւնը՝ արգելափակելու ամերիկեան լրացուցիչ օգնութիւնը Ատրպեյճանին, քանի դեռ վերջինս չի դադարեցներ իր յարձակումը տարածաշրջանին մէջ», - նշած էր ծերակուտականը:



ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆԻ ԴԻԲԱՆԱԿԵՏԸ Կ'ԱՅԱԶԱՆԳԵ. «ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆԸ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՄՊԱՆԱԼԻՔԻ ՏԱԿ Է»

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիւանապետ Աղան Գոգչեան տեղեկացուցած է, որ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանը կը գտնուի իր 16-դարեայ պատմութեան ամենամեծ գոյութեան սպառնալիքին տակ, եւ գոյացած տարածքային վտանգը ամբողջովին կը տարածուի Երուսաղեմի բոլոր քրիստոնէական համայնքներուն վրայ:

Գոգչեանը Facebook-ի իր էջին վրայ գրած է, որ Հայոց Պատրիարքարանը վերջերս չեղարկած է կեղծ ներկայացուցչութեամբ, անհարկի ազդեցութեամբ եւ անօրինական օգուտներով պատուած պայմանագիրը:

«Չեղարկման օրինական պատասխան տալու փոխարէն՝ կառուցապատողները կը փորձեն շինարարութիւն իրականացնել «Կովերու պարտեզ» կալուածքին վրայ: Անոնք ամբողջութեամբ անտեսած են Պատրիարքարանի օրինական դիրքորոշումը այս հարցով՝ փոխարէնը ընտրելով սադրանքի, յարձակում հրահրող մարտավարութիւն, ներառեալ սեփականութեան ոչնչացումը վարձու, զինուած սադրիչներու միջոցով», - կ'ահագանգէ Գոգչեանը:

Աղբիւրին համաձայն՝ վերջին օրերուն Երուսաղեմի հայկական թաղամասի տարածքին վրայ ասֆալթի ահռելի ոչնչացումն ու հեռացումը իրականացուած է առանց Երուսաղեմի քաղաքապետարանի, կառուցապատողի եւ ոստիկանութեան արտօնութեան: Հակառակ այդ հանգամանքին՝ ոստիկանութիւնը, այնուամենայնիւ, վերջին քանի մը օրերուն նախընտրած է հայ համայնքի բոլոր անդամներէն պահանջել ազատել տարածքը:

«Մենք կը խնդրենք Երուսաղեմի ողջ քրիստոնէայ համայնքներէն այս աննախադէպ ժամանակներուն կանգնիլ Հայոց Պատրիարքարանի կողքին, քանի որ ասիկա եւս յստակ քայլ մըն է, որ ձեռնարկուած է Երուսաղեմի եւ Սուրբ Երկրին մէջ քրիստոնէաներուն ներկայութիւնը վտանգելուն ուղղութեամբ», - գրած է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի դիւանապետը:

Յիշենք, որ Երուսաղեմի հին քաղաքի հայկական թաղամասի հատուած մը Պատրիարքարանը 99 տարիով վարձակալութեան յանձնած էր իսրայէլական ընկերութեան: Գործարքին հետեւանքով Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան մէջ ստեղծուած էր մտահոգիչ իրավիճակ:

Երուսաղեմի հայկական համայնքը կազմակերպած էր քանի մը բողոքի ցոյց՝ դէմ բողոքելով այդ գործարքին՝ զայն անուանելով ապօրինի: Երեք կազմակերպութիւններ՝ «ՀՄԸՄ Երուսաղեմ», «Հայ երիտասարդաց միութիւն Երուսաղեմ» եւ «Բարեսիրաց միութիւն» յայտարարութիւն տարածած էին՝ Հայոց Պատրիարքին կոչ ընելով չեղարկելու «Կովերու պարտեզ» կալուածքին գործարքը եւ առաջարկելով այդ հարցով համայնքին աջակցութիւնը: Ի վերջոյ, Նոյեմբեր 1-ին Երուսաղեմի Հայոց պատրիարքարանը յայտնած էր, որ որոշում կայացուցած է չեղարկելու «Կովերու պարտեզ»-ը վարձակալութեան տալու գործարքը:



ԿԱՐԵՒՐԸ ՊԱՅԱՆՁԱՍԵՐԻ ՄԵՐ ԴԻՐՔԵՐԸ ԶԶԻՉԵԼՆ Է

ՅԱԿՈՐ ԱՆԵՏԻՔԵՆՆ

Կը թուի՝ Վերջին անգամ դատաստանի օրերը մօտեցեր են: Նախորդ շաբթուան ընթացքին, կարծես ձայն ձայնի տուած, զոյնմի, ափսոսանքի, ներողութեան պաշտօնական ու կիսապաշտօնական խօսքեր արտասանեցին յաջորդաբար Մեծ Բրիտանիայի թագաւորը, Գերմանիայի Նախագահը, Հոլանտայի վարչապետը, Նոյնիսկ՝ Անգլիկան եկեղեցւոյ պետը՝ Քենթրալի Արքեպիսկոպոսը: Ինքնախարազանական խոստովանութիւններ՝ անցեալին իրենց գրաւած, դարերով գաղութի վերածած ափրիկեան ցամաքամասի երկիրներու բնիկ ժողովուրդներուն դէմ կատարած իրենց յանցագործութիւններուն, ցեղասպան արարքներուն, խտրական ու ցեղապաշտ քաղաքականութեան, զանոնք ստրկացումի, անհատոյց աշխատանքի ենթարկելու, տանջելու, նուաստացնելու, բռնաբարելու եւ, մանաւանդ, վաճառքի հանելու վերաբերեալ:

Առաջին մեղայականը հնչեց Եւրոպայի ամենէն ամառ դապահ պետութեան՝ Մեծ Բրիտանիայի ու Ռուսի իշխան Չարլզի բերանէն: Նախորդ երկուշաբթի օրը, Քենիայի մայրաքաղաք Նայրոպի մէջ թագաւորը ընդունեցաւ, որ իր երկիրը նողկալի եւ անարդարանալի, բնորոշումները իրն են, բռնութիւններ ի գործ դրուել են իր երկրին կողմէ քենիացիներուն դէմ, յատկապէս անոնց ըմբոստութիւնները զսպելու երկարատեւ բախումներուն ընթացքին: Ու թէեւ Չարլզ թագաւորը ներողութիւն չխնդրեց, սակայն հասկցուց, որ այդ պարտականութիւնը պիտի կատարէ Բրիտանիոյ կառավարութիւնը:

Երկրորդ խոստովանութիւնը արձանագրուեցաւ Գերմանիայի Հանրապետութեան Նախագահ Շթայնմէյերի կողմէ, այս անգամ ափրիկեան մէկ այլ երկրի՝ Թանզանիայի մայրաքաղաք Տարաս Սալամի թանգարաններէն մէկուն մէջ, մամլոյ ասուլիսի ընթացքին: Գերմանիայի Նախագահը յատկապէս յիշատակեց 1906-ին Սոնկեա քաղաքին մօտիկ Մաժի-Մաժի բնակավայրին մէջ գերմանացի գաղութարարներուն դէմ բնիկներու ապստամբութիւնը, զոր զսպելու համար Նոյն գերմանացիները սպաններ էին անելի քան 600.000 բնիկներ՝ կին, երախայ ներառեալ: Անոնք մերժեցին էին գերմանական առետրական ընկերութիւններու համար բամպակ ցանել-հաւաքել՝ առանց դիմացը որեւէ վարձատրութիւն ստանալու: Նախագահը իր ելոյթին մէջ ըսաւ. «Կ'ուզէի ձեր ներողամտութիւնը հայցել գերմանացիներու կողմէ ձեր նախադրուած նկատմամբ կատարուած յանցագործութիւններուն համար»: Ան խոստացաւ այդ եւ այլ՝ շարդարարութիւններու մասին վկայութիւնները հետը տանիլ Գերմանիա, «որպէսզի իմ երկրին մէջ անելի շատ մարդիկ իմանան այդ մասի», ըսաւ ան:

Իմ տպաւորութեամբ՝ անելորդ աշխատանք: Քանզի ընթացիկ տարուան Յուլիսի 1-էն սկսեալ, որ 162-րդ տարեդարձն էր Ազատագրումի (Emancipation) Ուխտին, որմէ 10 տարի յետոյ, 1872-ին, ընդունուել էր նաեւ Ստրկատիրութեան արգիլումի Ուխտը, արդէն եւրոպացի եւ նախկին գաղութացուած երկիրներու հասարակագետներն ու մարդկային իրաւունքներու պաշտպանները սկսեցին բառեր ու որակումներ չխնայել նախկին գաղութարար երկիրները քննադատելու, անոնց յանցանքները յիշեցնելու, ընդգծելով իրենց գաղութները հարստահարելու, ստիպողաբար բամպակ, սուրճ, շաքարեղէգ ու ծխախոտ մշակելու, բռնի եւ անվարձատր արարքները ուղեկցող ցեղասպանական գործողութիւնները, նպատակ ունենալով հանրային լայն շրջանակները իրազեկել այդ բոլորի մասին: Անոնք, այդ գործիչները, սկսած են արդէն պահանջել, որ պատասխանատուները չբարարարուին ներողութեան խօսքերով, այլ՝ լրջօրէն զբաղին փոխհատուցում տալու պարտականութեամբ:

Այդ երկիրներու շարքին անակնկալօրէն յայտնուեցաւ նաեւ Հոլանտան, Եւրոպայի ամենահարուստ ու բարգաւաճ, այսպէս կոչուած՝ «Ոսկեայ դարաշրջան» տեսած երկիրը: Կը պարզուի, որ 17-19-րդ դարերուն այս երկիրը անելի քան 600.000 ափրիկեան ստրուկներ գերեվարելու եւ վաճառելու է «Նոր աշխարհ» Ամերիկա, եւ կը համարուի մարդկային առուծախի (trafficking) ախոյեան, իսկ ներկայիս կը պատրաստուի, ինչպէս անցեալ շաբաթ Լա Չեյի մէջ դէպի հոլանտական նախկին գաղթավայր



Երգիծանկար՝ Թորոյի, յատուկ «Պայքար»-ին

Սուրինամ մեկնելէ առաջ յայտարարեց վարչապետ Մարք Ռուֆը, իր երկիրը պատրաստ է ոչ միայն ներողութիւն խնդրելու, այլ նաեւ 200 միլիոն եւրօ յատկացնելու իրազեկման ծրագիրներու (awareness projects) համար եւ 27 միլիոն՝ Ստրկութեան թանգարան կառուցելու նպատակով:

Այս բոլորը կը նշանակեն, որ մեղայական գործընթացները նոր թափ պիտի ստանան Եւրոպայի տարածքին եւ այլուր, ընդգրկելով, հաւանաբար, նախկին գաղութարար միւս երկիրները՝ Ֆրանսան, Սպանիան եւ Փորթուգալը, գուցէ նաեւ Ռուսաստանը, որուն սիպիրականաքարավայրային քաղաքականութիւնը նպատակ ունի միլիոնաւոր քարտէալներու միջոցով, որոնց շարքին՝ հազարաւոր հայեր, ծաղկեցնել Սիպերիոյ սառցապատ տափաստանները, շահագործել անոր հանքային հարստութիւնները:

Այո, գործընթացը սկիզբ առած է եւ միտում ունի տարածուելու: Սակայն դժուար թէ այդ տարածումը ընդգրկէ նաեւ մեզի մօտիկ ու մերձակայ տարածքները, նկատի ունիմ Իսրայէլը եւ Թուրքիան: Առաջինը՝ արաբական աշխարհի ոստիկանի, երկրորդը՝ ՆԱԹՕ-ի սահմանները պահողի դերով: Առաջինը՝ ցեղասպանուած ըլլալու փաստով ինքզինքն ապահովագրած, երկրորդը՝ ցեղասպան ըլլալով հանդերձ իր անպատժելիութեամբ գօտեպընդուած: Առաջինը այսօր ինք կը ցեղասպանէ պաղեստինցի ժողովուրդը եւ թիկունք կը կանգնի Թուրքիա-Ատրըպէյճան հակահայ ցեղասպան զոյգին, երկրորդը կը շարունակէ մերժել առեւտուի իր պատմութեան հետ եւ, ընդհակառակն, կը փորձէ նախկին Խ. Միութեան գերեզմանափոսի վրայ վերականգնել իր հին կայսրութիւնը: Հին բարբարոսներ, նոր բարբարոսութիւններ, որոնցմէ վերջինը պայթեցաւ մեր գլխուն՝ Արցախի կորուստով:

Այս կացութեան մէջ ինչ կրնանք ընել մենք: Նկատի չունիմ այժմու մեր կառավարութիւնը. Անիկա ընդունակ չէ որեւէ բան ընելու, բացի իշխանական իր դիրքերը ամրացնելէ: Նկատի ունիմ lobbying-ի մեր տակաւին գոյութիւն ունեցող շրջանակները, օտարերկրեայ մամուլը: Կրնանք օգտուիլ Եւրոպական վերոյիշեալ երկիրներէն փչող բարենպաստ նոր քամիներէն, առաջատար պարզել ու բարձրանալ ալիքներու վրայ, ուրկէ անելի լաւ կ'երեւի ամէն բան, նկատի ունիմ մեր ընելիքները: Առաջին հերթին պէտք է կեդրոնանալ Գերմանիոյ վրայ, որ 90-ականներու վերջերը, գիտակցելով Հայոց Ցեղասպանութեան մէջ իր մեղակցութիւնը, Նոյնիսկ պատրաստ էր, նկատի ունիմ Պոլստեստաքի որոշակի շրջանակներ, փոխհատուցողական քայլերու դիմել, որմէ չկրցաւ օգտուիլ յատենի մեր կառավարութիւնը:

Կրկին եկեր է պահը համապատասխան քայլեր ձեռնարկելու: Կարելորդ Եւրոպայէն եկող մեղայական ու հատուցողական նոր հոսանքին մերձենալն է: Կարելորդ պահանջատիրոջ մեր դիրքերը բնաւ ու երբեք չզիջելն է:

Երեւան
«Պայքար» շաբաթաթերթ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԵՆ ՀԱԿԱՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԿԸ ԳՆԷ

Հնդկական The Eurasian Times-ը գրած է, որ հրթիռահրետանային միջոցներ եւ հրթիռներ ներդրելէն վերջ, Հայաստան այժմ Հնդկաստանէն հակատրոնային համակարգ կը գնէ:

«Հայաստան պայմանագիր կնքած է Հնդկաստանի կողմէն մշակուած Zen հակատրոնային համակարգ գնելու համար», գրած է կայքը՝ վկայակոչելով իր աղբիւրը:

Ըստ պարբերականին, պայմանագիրին արժէքը կազմած է 41,5 միլիոն տոլար, որ ներառած է եւ հակատրոնային համակարգերու մատակարարում, եւ ուսուցում:

Աւարտին նշենք, որ 2022-ի Սեպտեմբերին հնդկական Economic Times-ը գրած էր, որ Հնդկաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը Հայաստանի հետ հրթիռներու, արկերու եւ զինամամբերքի մատակարարման խոշոր պատւեր ստորագրած է:

ԱԳԱԳԵՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱՆԵՏԻՍ ՊՆԳՈՒՆԵՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԷ ՄԱՐԿՈՍԵՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍՏՐ Բ. ՄԱՍՈՒՐԵՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada



ՊՈԼՍԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԵՔԷԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԱՆՆԱԽՆՆԹԱՅ ՓՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ (EARLY MODERNITY & MOBILITY)

Պոլսահայ Միութեան «ՄԷԿ» յանձնախումբն ու Թեքեան Մշակութային Միութիւնը, միացեալ ըլլալու սկզբունքէն առաջնորդուելով, 15 Նոյեմբեր 2023-ի Երեկոյեան, Պոլսահայ Միութեան «Արամ Խաչատուրեան» վերանորոգուած շքեղ սրահին մէջ, միասնաբար կազմակերպեցին գրական աննախնթաց երեկոյթ մը:

Միրայօժար կերպով ներկայ էր պատմագետ դոկտ. Սուրէն Դաւիթ Ասլանեան, որ պիտի ներկայացներ իր վերջին ուսումնասիրութիւնը՝ «Early Modernity & Mobility» հատորը:

Բացման խօսքը ըրաւ «ՄԷԿ» յանձնախումբի ժրաջան վարչական Տիկ. Ներսիս Սուքիաս- Տէմիրճեան որ շատ մաքուր առողջապահութեամբ ու յստակօրէն ներկայացուց օրուան նպատակը. յետոյ հրաւիրեց դոկտ. Կապրիէլլա Ճեռահեանը, որ մօտէն կը ճանչնար օրուան պատմագետ-բանաստեղծին:

Դոկտ. Ճեռահեան-անգլերէն լեզուով -դիւրահաղորդ, այլ մասնագիտական ոճով ներկայացուց դոկտ. Ասլանեանը:

Այս նախապատրաստական աշխատանքը - այսինքն՝ զոյգ դոկտորներուն ներկայութիւնը- արդէն տուած էր պահանջուած լուրջ, խոհական մթնոլորտը:

ՍԷԿՄ-ի պատմութեան համալսարանային դասախօս դոկտ. Սեպուհ Դաւիթ Ասլանեան հրաւիրուեցաւ ներկայացնելու իր վերջին ուսումնասիրութիւնը:

Նոս կ'արժէ փակագիծի մէջ անդրադառնալ, որ հակառակ ունեցած հարուստ գիտութեան, դոկտ. Ասլանեան, անգլերէնով, եւ ամենայն հանդարտութեամբ եւ յստակութեամբ մեզ մագնիսացուց գրեթէ մէկ ժամ, նիւթով մը, որ մեզ համար յայտնութիւն մըն էր:

Կլանուած ու հաճոյքով զինք մտիկ ըրինք:

«Early Modernity & Mobility» գիրքով դոկտ. Ասլանեան կը յայտնաբերէ XVII -XVIII դարերու Եւրոպայի կամ Ասիոյ հայկական տպագրական հաստատութիւնները: Ուսումնասիրութիւնը կը պարփակէ, առաջին տպագրական հոսանքէն, որ ծագում առած է Վենետիկ՝ 1512-էն մինչեւ 1800.

Նայկական տպագրութիւնը, ի սփիւռս աշխարհի, տեղի ունեցած է 21 շրջաններու մէջ, սկսելով Ամսթըրտամ-էն, Լիվորնօ-էն, Մարսէյ-էն մինչեւ Սէնթ-Փիլիքըզըրկ, Ասթրախան, Նոր Զուղա, Մատրաս եւ Կալկաթա: Լոյս տեսած են հազարի չափ հրատարակութիւններ եւ անելի քան կէս միլիոն տպագիր հատորներ:

Ընդարձակ արխիւային հետապնդումներէ ետք դոկտ. Ասլանեան կը յայտնաբերէ՝ թէ ինչո՞ւ կարգ մը գիրքեր տպուած են որոշեալ ժամանակի մը ընթացքին, ինչպէս գիրքեր ծախուած են սփիւռքի մէջ, ովքեր եղած են կարողացողները եւ թէ ինչպէս տպագրութիւնը մեծ դեր խաղացած է թէ՛ հայոց գրարար մշակոյթի պահպանման, թէ՛ ալ իրենց հաւաքական ինքնութեան վերամշակման գործողութեան մէջ:

Դոկտ. Սեպուհ Ասլանեան մտածելու դուռ կը բանայ, թէ դաւանային սահմանափակումները հայկական եւ հռոմէական եկեղեցիներու միջեւ, եղած են «մղիջ ուժը» հայկական գիրքի պատմութեան:

Դոկտ. Սեպուհ Ասլանեան ծնած է Ատիս-Ապապա (Եթովպիա) 1965-ին. 12 տարեկանին (1977) անցած է Միացեալ Նահանգներ, յետոյ Շարժա (Արաբական Միացեալ Էմիրութիւններ): 1980-ին եղած է Մոնթրէալ մօտ 11-12 տարի, բարձրագոյն ուսումը կը ստանայ John Abbott college եւ յետոյ McGill համալսարան: PHD-ին ստացած է Columbia համալսարանէն ունենալով իր բնագիտական «From the Indian Ocean to the Mediterranean» կոչուած ուսումնասիրութիւնը:

Ասլանեան դասուանողած է զանազան համալսարաններ, ներառեալ՝ Whitman College, University of Chicago, University of Michigan, California State University, Long Beach.

Այս բանախօսութենէն ետք դոկտ. Կապրիէլլա Ճեռահեան մտերմիկ մթնո-



լորտի մը մէջ առաջարկեց դոկտ. Ասլանեանին որ իր սրտի խօսքը ուղղէ հայ երիտասարդութեան:

- Ճիշդ է, թէ ցեղասպանութիւնը շատ մեծ ազդեցութիւն ունեցած է հայուն վրայ,- ըսաւ ան,- եւ ճիշդ է թէ պետք է արդարութիւնը հետապնդել եւ ստանալ, սակայն պետք է միշտ յիշենք որ հարուստ պատմութիւն մը ունեցած ենք բացառիկ մշակոյթով, որ պետք չէ նոյնացնել կամ շփոթել Յեղասպանութեան հետ: Պետք է անելի խորանանք մեր պատմութեան մէջ, որ մեզ պիտի առաջնորդէ համաշխարհային պատմութեան, եւ առաջնորդուելով համաշխարհային պատմութենէն՝ անելի քաջատեղեակ պիտի ըլլանք ՄԵԴ ազգային պատմութեան:

Ահաւասիկ գրական խնճոյքի երեկոյ մը, որ կը հասներ իր կատարելագոյնին, երբ կազմակերպիչ յանձնախումբը մտածած էր, տալ նաեւ հոգեւոր երեւոյթ մը: Տէր Կոմիտաս քինյ. Միրզախանեան նախ՝ յայտնեց իր սրտաբուխ խօսքը, այս բժախնդրօրէն պատրաստուած գիրքին ներկայացման՝ պտուղը տասը տարիներու աշխատանքին, յետոյ՝ հետաքրքրական նմանութիւնը ըրաւ «գինեձօն» բառին՝ նորածին մանուկի մը կնունքին եւ գիրքի մը ծննդեան օրհնութեանը:

Պատուասիրութեան սեղաններու- շուրջ հետաքրքիր ներկաներ տակաւին կը մօտենային Պատմագետին, ուղղելու համար հարցումներ, յարցազնուելու համար մակագրուած գիրքէն օրինակներ, ու մանաւանդ յազգեցնելու համար իրենց գիտական ծարաւը՝ նիւթի մը մասին, որ յայտնութիւն մըն էր բոլորիս համար:

Կը շնորհաւորենք Պոլսահայ Միութեան «ՄԷԿ» յանձնախումբի ու Թեքեան Մշակութային Միութեան զոյգ վարչութիւնները, որոնք առիթ կը ստեղծեն նման պատմագետներ հրաւիրելու, հետեւաբար եւ ստեղծելու տարբեր մթնոլորտ մը հարուստ ու առողջ մտածողականութեամբ:

Ահաւասիկ ուսումնասիրութիւն մը որ արժանի է գրախօսականի մը աշխատանքին:

Սոյն գիրքը կարելի է գտնել Amazon-ի վրայ: Պերճ Գոգորեան

ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ ԴԵՍՊՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԱԾ Է

Նայաստանի Նախարարութեան արտաքին գործերու նախարար՝ Արարատ Միրզոյեանի Միացեալ Թագաւորութիւն պաշտօնական այցի շրջանակներուն մէջ, Երկուշաբթի՝ 13 Նոյեմբեր 2023-ին, տեղի ունեցած է Միացեալ Թագաւորութեան մէջ Նայաստանի դեսպանութեան նոր շէնքի պաշտօնական բացման արարողութիւնը, որուն Միացեալ Թագաւորութեան կառավարութեան կողմէ մասնակցած է գործարարութեան եւ առեւտուրի պետական նախարար Թիմըթի Մինթօն:

Նայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը եւ Միացեալ Թագաւորութեան գործարարութեան եւ առեւտուրի պետական նախարար Թիմըթի Մինթօն հանդէս եկած են ողջոյնի եւ շնորհաւորական խօսքով: Միջոցառման ներկայ գտնուած են նաեւ Արքունիքի աւագ անդամ, ՄԹ արքունիքի եւ դիւանագիտական կազմի միջեւ կապերու մարշալ Ալիսթըր Նալիսընը, դիւանագիտական կազմի փոխմարշալ Վիքթորիա Պասպին, Բրիտանիոյ եւ Իրլանտայի հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ Յովակիմ Եպիսկոպոս Մանուկեանը, ինչպէս նաեւ ՄԹ արտաքին, համագործակցութեան եւ զարգացման նախարարութեան ներկայացուցիչներ:



ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽ ՀԱՐԿԱԴՈՐ Է ՆԵՐՔԻՆ ՀԱՐՅԵՐԸ ԿԱՐԳԱԴՈՐԵԼ

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳԴ, ՓՐՕՖԵՍՕՐ

Հասարակութեան համախմբման համար պետք է ոչ միայն գաղափարական այլև կազմակերպական հիմք, այսինքն ինքնակազմակերպում: Յետոյ էլ դրսի հետ յարաբերուելու համար նախ հարկաւոր է ներքին հարցերը կարգաւորել:

Նախապէս զգացում էր, իսկ Սեպտեմբերի 19-ի ատրպէյճանական յարձակման ժամանակ, ակնյայտ երեւաց, որ Արցախը միայնակ էր մնացել: Պաշտպանութեան բանակը թէեւ փորձեց քաջաբար ինքնապաշտպանուել, բայց քանզի պարզ երեւաց, որ ռազմաճակատից առաջ, դիւանագիտական դաշտում արդէն պարտուել էին, իսկ ռուս խաղաղապահ ոյժերն էլ վերածուել էին անտարբեր ու անզօր դիտորդի, ստիպուած վայր դրեց զէնքը: Բոլորովին էլ գաղտնիք չէ, որ Արցախի անօգնական մնալն ու պարտութեան վերջին արարը սկսեց խմբագրուել այն պահից, երբ Հայաստանի վարչապետը խրոխտաբար յայտարարեց, թէ Արցախը Ատրպէյճանի մաս է կազմում: Այս դժուարին պահին էլ ՀՀ ղեկավարութիւնը սաստիկ զբաղուած է «Հայաստանը ժողովրդավար երկիր է», «Հայաստանը խաղաղութեան խաչմերուկ» քարտեզներով եւ ւաւերով: Եւ համարում նոյնիսկ տեսակցել Արցախի ղեկավարների հետ: Այդ տեսակ վերաբերմունք է դրսեւորում նաեւ կեանքի շատ բնագաւառներում: Մասնաւորապէս, վերախմբագրուել են հայոց պատմութեան դասագիրքերը, որոնց մէջ արդէն Արցախը նոյնիսկ հնագոյն դարաշրջանների քարտեզների վրայ տեղ է գտել գոյութիւն չունեցող Ատրպէյճանի կազմում: Աւելին, արւում է ամէն ինչ պետականութեան պահպանութեան փոխարէն վարչախմբի անվտանգութիւնն ապահովելու համար:

Ի հարկէ, որոշ քայլեր արւում են արցախահայութեանն այս դժուարին պահին օգնելու ուղղութեամբ, սակայն արդէն նկատուում են նաեւ անցանկալի երեւոյթներ: Օրինակ՝ Հայաստան բռնագաղթելուց յետոյ արցախցիներից ըստ էութեան վերցում է Հայաստանի հպատակի իրաւունքը: Այս ամէնին զուգահեռ կարծես մոռացութեան են տրւում նաեւ Պաքոյի բանտերում նախկինում գերեզմարած մեծաթիւ հայորդիներին գումարուած Արցախի տասնընեակ ղեկավարները: Յիրաւի, ստեղծուել է մի իրավիճակ, երբ անորոշութիւնից ու ինֆորմացիայի չգոյութիւնից շփոթուած են թէ իշխանութիւնը, թէ ընդդիմութիւնը, Սփիւռքն ու եկեղեցին՝ բոլորը: Հարց է առաջանում. ո՞ւմ է սա ձեռնտու: Ակնյայտ է, որ նախ՝ Ատրպէյճանին, որը լծուած է Արցախում հայկական հետքերը վերացնելու գործին: Տպաւորութիւն է նաեւ, որ մեր վարչախումբն ու ընդդիմութիւնն էլ է ձգտում օր առաջ օձիքն ազատել արցախեան թնջուկից: Զարմանալիօրէն հանգիստ են նաեւ արցախցիները: Հետաքրքիր է ինչի ենք սպասում ազգովի եւ արդէն ճիշտ մտայնութեամբ խմբագրուելու ու համազգային ողբերգութեան նկատմամբ այսպիսի արհամարհանքը ներելի է: Արդէն ճշմարիտ է այն յայտնի խօսքը, թէ Աստուած դիմելով հայ ժողովրդին՝ ասում է, որ ձեր յամառութեան պատճառով էք դուք կոտորուում, այդ պատճառով ես ձեզ կը հանեմ այս դժոխքից եւ կ'ապրեցնեմ Աւետեաց երկրում...

Վերանայնալից անցնելու զուգընթաց մենք վիթխարի ձեռքբերումներ ունեցանք: Ամենակարեւորն Արցախն էր: Ուստի պարտաւոր էինք այնքան թանկ գնով նուաճած Արցախը գուրգուրել ու փայփայել էնպէս, ինչպէս գուրգուրում եւ սիրում են որբութիւնից վերագտնուած զաւակին: Բայց, ցաւօք, դա չարեցիկն էր դրանից վրդովուած Սօս Սարգսեանը գրում էր. թէ ինչ «ղարաբաղեան կլան» ինչ «սահման»: «Ղարաբաղեան կլան» ասողը «թուրք է»: Հայեր, «սահման» բառը մի օգտագործեք, մեր հողերն են, ինչ սահման... Իմ մտքում «սահմանն» էդտեղ չէ: Սահմանը մեզ համար շատ խորքերում է: Հա, ես էլ կ'ուզեմ, որ առետուր, փոխարաբերութիւններ լինեն թուրքի հետ, բայց ես միշտ եմ կոչ անում՝ զգո՛յն եղէք, ուշադիր եղէք, թուրքի հետ գործ ունեք: Այնպէս որ, սահմանները բացելը սխալ արտայայտութիւն է: Իմ երկրի մի մասից միւս մասը՝ մտքումս, հոգումս սահման չի կարող լինել: Իմ Արարատի սիրտը կիսել ես՝ ասում ես այստեղ սահման է: Չեմ ընդունում էդ քո սահմանը...: Չհասկացանք ցաւօք եւ հերթական անգամ մեր ներսում նոր սահմանագիծ ծնուեց:

Յիշում եմ, 1988թ. հանրահաւաքներից մէկի ժամանակ, ի պատասխան հանրութեան պահանջին, Դեմիրճեան Կարէնն ասաց, որ «Ղարաբաղը գրպանումս չի, որ հանեմ եւ տամ»: Այն ժամանակ նման արտայայտութիւնը հանրութեան կողմից վիրաւորական որակուեց եւ Դեմիրճեան Կարէնի վարկանիշի սրընթաց անկման առիթ հանդիսացաւ: 34 տարի անց, 2022թ մեր վարչապետը փաստացի կրկնեց Դեմիրճեան Կարէնի բառերը: Դա նշանակում է, որ 34 տարի շարունակ մեզ բոլորիս խաբել են: Արցախի իրաւական կարգավիճակը 34 տարի շարունակ որեւէ կերպով չի փոխուել: Արցախն այնպէս, ինչպէս 34 տարի առաջ մնում էր ինչ-որ մէկի գրպանում եւ դա, ըստ ամենայնի, ռուսի գրպանն էր: Համոզուած եմ, որ Դեմիրճեան Կարէնի՝ գրպանի վերաբերեալ «եզրահանգումները» հասանելի էին Տեր-Պետրոսեան Լեւոնին, Քոչարեան Ռոպէրթին, Սարգսեան Սերժին եւ ՀՀ այսրոպէական ղեկավարին: Աւելին՝ Դեմիրճեան Կարէնի՝ Արցախի վերաբերեալ «եզրահանգումները» չեն հերքուել վերջիններից եւ որեւէ մէկի

կողմից: Իսկ դա, իր հերթին նշանակում է, որ, առանց բացառութեան, ՀՀ բոլոր ղեկավարներն Արցախի վերաբերեալ հանրային ծրագիր ներկայացնելիս ստում էին: 34 տարի մենք ստի մէջ ենք ապրել: Հիմա էլ այդ ստի արդիւնքում Արցախը հեշտ ու հանգիստ, սկուտեղի վրայ յայտնուեց Ատրպէյճանի գրպանում:

Նուր թագաւորներն իրենց համար նախատեսուած ճաշից սկզբում այն եփած խոհարարին էին ուտեցնում, որպէսզի այն թունաւորուած չլինէր, կամուրջ կառուցած ճարտարապետին իր ընտանիքի անդամների հետ կանգնեցնում էին իր կառուցած կամրջի տակ, կամրջի վրայ կանգնեցնում էին բեռնուած բազում սայլեր եւ այդպէս կատարում էր կամրջի փորձարկումը: Իսկ մենք հասանք այն հանգրուանին, որ նախ՝ յանձնենք Արցախը, իսկ յետոյ Հայոց պատմութեան դասագիրքը ուղարկենք դպրոցներ, որոնցում տեղ գտած քարտեզներում Քրիստոսից առաջ առաջին դարում Հայաստանի հարեան պատկերուած լինի Ատրպէյճանը՝ Արցախով հանդերձ: Իսկ «իր եփած ճաշով իր զաւակներին չկերակրող» ԿԳՄՍ նախարարը յայտարարի՝ ծնողները չպետք է որոշեն, թէ ինչ դասագրքերով պետք է սովորեն իրենց երեխաները: Հերթական անգամ ակամայ հաստատուում է, որ հայը ցանելու համար նախատեսուած սերմերի միջից ամենալաւն ու որակեալն է ընտրում, որ յաջորդ բերքը ւաւելի լաւը լինի, քան նախորդը: Թուրքն ու ազիկը գիտեն հայի այս բնաւորութիւնը: Այդ պատճառով ազգի սերմից ոչնչացրին ամենաամենաազգային՝ առողջ, խելացի, հայրենասէր, սեւ, խոշոր խաղողահատիկ աչքերով մեր սերմնացան տղաներին:

Չեմ ուզում հաւատալ, բայց արդէն ակնյայտ իրողութիւն է, որ նախապէս Արցախի ղեկավարութիւնը տիրապետելով հանդերձ ողջ ինֆորմացիային, թէ ինչ է սպասում Արցախին եւ Արցախահայութեանը, խիստ զբաղուած էին փաստաթղթերի ոչնչացմամբ: Սակայն տեղեկատուական արտահոսք է տեղի ունենում, արցախցի տղամարդկանց ողջ տուեալները ինչ որ կերպ փոխանցում են ատրպէյճանցիներին, բայց իրենք աշխատասենեակներում փակուած այլ փաստաթղթեր էին մոխրացնում: Արցախում սովից մարդիկ էին մահանում, բայց իրենք պահեստներում իրենց ընտանիքների համար կուտակած ամէն բան ունէին: Մարդիկ դեղորայքի կարիք ունէին, բայց իրենք կարմիր խաչի օգնութեամբ Երեւանից ֆիլիւրներ (գեղեցկամիջոցներ) էին պատուիրում իրենց պերճաշուք ու պճնամուկ կանանց համար: Բացի հասարակ ժողովրդից բոլոր թաւանջի սրիկաները էլք ու մուտք էլ են ունեցել ինչ որ կերպ, առք ու վաճառքով էլ են զբաղուել տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ: Կապիտուլեանտ ղեկավարութիւնը լաւ գիտէր, որ բենզալը-ցակայանի պայթիւնի հետեւանքով մարդիկ են զոհուելու: Կարո՞ղ էր չէ մարդկանց բենզին յատկացնել ժամանակին, նախքան պետական դաւաճանութիւն կատարելը: Կարող էր չէ՞ զէնքը ոչնչացնելու հրաման տալ թշնամուն նուիրելու փոխարէն: Թէ՛ ասել էին Մարտի 1-ի հետքերով տանկերից ազատուեք, դուք էլ ոգեւորուած ամբողջ զէնքից ազատուեցիք ու, ոչինչ, որ անպաշտպան գիւղացին ցեղասպան եղաւ: Իսկ ձեր պէս վիժուածքները հաստ վզերը վերցրած Երեւան եկան ու հիմա էլ գումար են ուզում, աշխատավարձ են ուզում եւ նման բաներ: Ուզում եմ նախապէս տեղեկացնել, որ դուք այսուհետ թեւակոխում էք պատմական նոր ժամանակաշրջան, որտեղ եթէ երկնքից անգամ մանանայ թափուի, գրպաններդ չի լցուի, բայց որ անտառից գերան պոկուի հաստատ գլխներիդ կ'ընկնի: Սա վերաբերում է Արցախի կապիտուլեանտ իշխանութիւններին եւ մնացած բոլոր մեղաւորներին:

Ուզում եմ նաեւ հաւատալ, որ եթէ Արցախն զգար, որ հայրենիքն իր թիկունքին կանգնած է, երբեք չէր լքի, բայց որբ ու անտէր էինք թողել...: Յայտնի է, որ մարդիկ սովորաբար հարբում են տխուր եւ ուրախ առիթներով: Սխալուած չեմ լինի, եթէ ասեմ, որ մենք, 19-րդ դարի վերջից սկսած, անընդհատ հարբած էինք տխուր առիթներով: 1990-ականներին եղաւ պատերազմ, եղան յաղթանակներ ու մենք հարբեցինք արդէն ուրախ առիթով՝ վստահ, որ «անհնար է հայոց ոգին ընկճել»:

Ուզում եմ նաեւ իմանանք, որ Աստուած բոլորին ամէն ինչ տալիս է: Աստուած հէնց դա է նշանակում: Դա տրւում է ի սկզբանէ եւ ընդմիջտ, բայց եթէ ճիշդ չես վարում քեզ տրուածի հետ, Աստուած պատժում է եւ որքան շատ է եղել տրուածը, այնքան դաժան է լինում պատիժը: Միամտութիւն է դժգոհել աստծուց կամ սիրաշահել նրան եկեղեցիներ կառուցելով: Սրբութիւնը մարդու հոգում պիտի լինի, ոչ թէ քարակերտ շինութիւններում: Մեր ժողովուրդն իր տունը սարքելու փոխարէն Աստծոյ համար եկեղեցիներ է կառուցում եւ զարմանում, թէ ինչո՞ւ է իր Հայրենիքը ամպի նման ծուկն-ծուկն վերանում: Թուրքը մեր թշնամին չէ, նա Աստծոյ մտրակն է, որ ամէն անգամ շառաչում է մեզ պատժելու համար: Քարկոծելուց առաջ եկէք մտածենք, գուցէ Աստուած մեզ ւաւելի լաւ է ճանաչում...:

Երեւան
5.11.2023

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 20 NOVEMBRE 2023

Bakou organise une «marche de la victoire» dans la capitale désertée du Haut-Karabagh

Écrit par Alda Engoian et publié dans *Courrier international* en date du 9 novembre 2023



Les autorités de l'Azerbaïdjan ont symboliquement « tiré un trait », le 8 novembre, sur trente ans de conflit avec les forces et les habitants du Haut-Karabagh, en organisant un défilé militaire célébrant la victoire du pays dans cette région.

« Le 8 novembre, en présence du président de la République d'Azerbaïdjan et commandant en chef suprême des forces armées, Ilham Aliev, de la première vice-présidente, Mehriban Alieva, et de leur fils Heydar Aliev, dans la ville de Khankendi (nom azerbaïdjanais de la capitale du Haut-Karabagh, Stepanakert pour les Arméniens), a eu lieu un défilé militaire dédié au troisième anniversaire de la victoire dans la guerre patriotique », rapporte, enjoué, le site azerbaïdjanais Oxu.

Ce que le discours officiel désigne ainsi, ce sont les 44 jours d'affrontements militaires entre l'alliance turco-azerbaïdjanaise et les Arméniens du Haut-Karabagh, du 27 septembre au 10 novembre 2020, qui ont fait perdre aux Arméniens les deux tiers du territoire de leur république autoproclamée, conquis de haute lutte à l'issue de la guerre de 1992-1994. « Un défilé grandiose », titre pour sa part le site azerbaïdjanais Report, qui propose un reportage photographique de l'événement.

Comme le rappelle le quotidien russe Kommersant, il s'agissait de la deuxième parade militaire organisée par Bakou sur le thème de la victoire dans la « deuxième guerre du Haut-Karabagh ». Le premier défilé avait eu lieu à Bakou, capitale de l'Azerbaïdjan, le 10 décembre 2020, un mois tout juste après la signature du cessez-le-feu qui a mis un terme aux affrontements d'alors. Le président turc, Recep Tayyip Erdogan, y avait assisté.

Par la suite, le 19 septembre 2023, Bakou a mené une offensive éclair contre les forces du Haut-Karabagh, qui ont définitivement capitulé le 20 septembre. Dans son discours du 8 novembre, Aliev s'est félicité. « Dans l'histoire séculaire du peuple azerbaïdjanais, il n'y a pas eu de victoires aussi brillantes. » Celle-ci a permis à Bakou d'obtenir « la capitula-

tion qui a mis fin au régime fantoche créé sur nos terres il y a trente ans. Ce régime illégal est tombé, nous avons donc restauré la justice historique ».

« Le 20 septembre 2023 restera dans notre histoire, au même titre que le 8 novembre 2020 », s'est rengorgé le président azerbaïdjanais.

La parade militaire avait pour but de « tirer un trait sur la lutte de l'Azerbaïdjan depuis trente ans pour reconquérir un territoire que Bakou considérait comme illégalement occupé », analyse Kommersant. La capitulation des autorités du Haut-Karabagh ayant entraîné l'exode de plus de 100 000 Karabaghis, qui ont fui la terre de leurs ancêtres en dix jours, le défilé s'est déroulé « dans une ville fantôme, abandonnée par la population arménienne », relève le titre russe.

En Arménie, pendant ce temps, « l'état d'esprit était tout autre », souligne Kommersant. Comme pour le président du parti Arménie juste, Norik Norikian, qui confie au site arménien Verelq que ce 8 novembre 2023 a été « un jour de honte et d'humiliation ». « Le simple fait qu'Aliev ait organisé un défilé militaire à Stepanakert est pour nous une honte, a-t-il commenté. Cette honte doit être éradiquée pour que notre peuple puisse vivre dignement sur sa terre ». Et de mettre en garde ceux qui « ont conduit l'Arménie et l'Artsakh à cette situation tragique », car ils devront « en répondre ».

Pour le site russo-arménien Russia Armenia Info, « par de telles 'marches de la victoire' et autres provocations de propagande, Bakou cherche à consolider les résultats de ses guerres terroristes, qui ont ébranlé les fondements juridiques de l'ordre mondial et sont devenues une sorte de déclencheur pour l'effondrement de la stabilité et de la sécurité non seulement régionales, mais aussi mondiales ».

Le site constate que « le tandem turco-azerbaïdjanais ne peut être freiné par des appels, des condamnations et autres exhortations ». Et qu'il faudra « des actions concrètes et des mesures sévères pour punir les initiateurs et les auteurs de ce génocide au XXIe siècle ».

Si Bakou confirme les principes convenus, le traité de paix sera prêt à 70%

Si l'Azerbaïdjan réaffirme ce qui a déjà été convenu, cela signifiera que 70% du travail sera fait, a déclaré le Premier ministre arménien Nikol Pachinian lors de son discours au 6e Forum de Paris sur la paix, le 10 novembre dernier.

« Maintenant, la nuance la plus importante est de savoir si l'Azerbaïdjan reconfirmera ce qui a déjà été convenu à Bruxelles lors de nos négociations et qui a été défini dans les déclarations publiques de Charles Michel », a-t-il déclaré.

Pachinian a rappelé que l'Iran avait clairement déclaré qu'il soutenait le processus de paix fondé sur les principes de souveraineté, d'intégrité territoriale et d'indivisibilité des frontières.

« Ce sont d'ailleurs les principes que j'ai évoqués dans mon discours. Et ces principes ont également été convenus lors de la réunion tripartite à Bruxelles », a noté le Premier ministre arménien.



Chasser la Russie d'Asie centrale et de Transcaucasie

Selon le ministre russe des Affaires étrangères Sergueï Lavrov, l'Union européenne (UE) a décidé de chasser la Russie de l'Asie centrale et ne cherche pas à le cacher. Selon lui, les projets de l'UE ne se réaliseront pas, rapporte la chaîne de télévision 360, citant un extrait de son discours dans l'émission « Moscou, Kremlin, Poutine » du journaliste Pavel Zarubin.

« L'Union européenne ne cache pas son intention de nous restreindre et de nous expulser d'Asie centrale et du Caucase du Sud. Ils réussiront », a déclaré le ministre russe des Affaires étrangères.

Lavrov a rappelé que la Russie est liée à ces territoires par l'histoire et n'a pas l'intention de disparaître. « Nos partenaires et alliés le savent très bien », a-t-il précisé.



Résumé de la participation de l'Arménie à l'UNESCO



Le 7 novembre, la République d'Arménie a obtenu son deuxième mandat consécutif comme vice-présidente de la 42e session de la Conférence générale de l'UNESCO (les élections précédentes ont eu lieu en 2021).

Le ministre arménien des Affaires étrangères, Ararat Mirzoyan, a participé à cette 42e session de la Conférence générale à Paris, au cours de laquelle il a souligné les principaux sujets de la coopération de l'Arménie avec l'organisation ainsi que les questions de protection du patrimoine culturel et religieux arménien dans le Haut-Karabagh. Dans le cadre de la Conférence générale, Ararat Mirzoyan a eu une réunion avec Audrey Azoulay, directrice générale de l'UNESCO.

Une feuille de route de la Banque mondiale pour améliorer l'efficacité des dépenses publiques d'Arménie

Un nouveau rapport analytique de la Banque mondiale, la « Revue des dépenses publiques (PER) : Améliorer l'efficacité des envois », publié le 9 novembre, révèle des améliorations dans la performance budgétaire de l'Arménie au cours des deux dernières décennies et présente une feuille de route pour améliorer l'utilisation des dépenses publiques, en particulier dans les domaines des infrastructures, du transport routier, de la santé et de l'éducation.



Suite à la page 6

Possible réunion à Bruxelles entre Pachinian, Aliev et Michel

Le secrétaire du Conseil de sécurité arménien Armen Grigorian et le représentant spécial de l'Union européenne (UE) pour le Caucase du Sud et la crise en Géorgie Toivo Klaar discuteront à Bruxelles de la tenue d'une réunion au format Pachinian-Aliev-Michel.



Fin octobre, Toivo Klaar avait annoncé que la rencontre entre les dirigeants arménien et azerbaïdjanais n'aurait pas lieu, faute de temps.

Le secrétaire du Conseil de sécurité a confirmé le 10 novembre que l'Arménie est prête à une réunion à Bruxelles dans un format trilatéral.

« Nous l'avons dit auparavant et nous le disons maintenant : l'Arménie est prête. Autrement dit, lorsque cela est possible, les trois parties doivent parvenir à un accord. L'Arménie est tout à fait d'accord avec cela. Cette réunion aura lieu en vue d'un accord », a souligné Grigorian. Grigorian a ajouté n'être pas au courant d'une invitation à la partie russe.

L'Azerbaïdjan détruit une église arménienne à Hadrou

L'organisation internationale pour la protection du patrimoine caucasien, Héritage Caucase Watch (CHW), a publié un avertissement concernant la destruction de l'église arménienne de la région de Hadrou, en Artsakh occupé, qui documente la violation de la décision de la Cour internationale de Justice des Nations unies.

Au cours de l'été 2022, Héritage Caucase Watch a enregistré la destruction presque complète du village de Mokhrenes, dans la région de Hadrou, passé sous juridiction de l'Azerbaïdjan après la guerre de 44 jours en Artsakh en 2020. Parmi les structures détruites se trouvait également l'église arménienne Saint Sargis de Mokhrenes, construite aux XVIIIe et XIXe siècles, transformée pendant les années soviétiques, puis redevenue une église dans les années 1990 et est restée en usage jusqu'à ce que les Arméniens évacuent Mokhrenes.

La démolition de l'église Saint-Sargis ne semble pas être la dernière étape en termes d'intervention azerbaïdjanaise, puisque l'organisation a documenté des preuves de nouveaux travaux de construction.

L'organisation rappelle que l'Azerbaïdjan a l'obligation de protéger le patrimoine culturel arménien et d'empêcher toute tentative visant à effacer des siècles de vie culturelle et religieuse arménienne à Mokhrenes.

« La destruction de Saint Sargis de Mokhrenes en 2022 a été la première violation documentée de l'ordonnance provisoire indiquée par la Cour internationale de Justice en décembre 2021 », a écrit CHW.

Selon l'organisation, cette « mesure provisoire », issue de l'affaire en cours Arménie c. Azerbaïdjan, ordonnait à l'Azerbaïdjan de « prendre toutes les mesures nécessaires pour prévenir et punir les actes de vandalisme et de profanation affectant le patrimoine culturel arménien, y compris, mais sans s'y limiter, les églises et autres lieux de culte, monuments, cimetières et artefacts.

Une feuille...

Suite de la page 5

